«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Հեքիաթի դերը կրտսեր դպրոցականի ստեղծագործական մտածողության ձևավորման գործում

ԱՌԱՐԿԱ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ Գոհար Երիցյան

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Վարդանաշենի Մ. Մինասյանի անվան մ. դ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1 5
ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ 5
ԳԼՈՒԽ 2 9
ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 9
ԳԼՈՒԽ 3 12
ՀԵՔԻՔԹԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ 12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսման հաջողությունն ու առաջընթացը պայմանավորված է ուսուցման կազմակերպման ճիշտ ձևով: Բոլորն էլ կարող են գրքի նյութը սովորեցնել գրքային տարբերակով, բայց արդյո՞ք բոլորն են հաշվի առնում երեխաների տարիքային առանձնահատկությունները և հոգեբանական պատրաստվածությունն ու ընկալունակությունը:

Հեքիաթը չունի կոնկրետ տարածք, կոնկրետ հասցեներ, չի պատկանում ոչ մի սոցիալական և տարիքային խմբի: Այն դուրս է առօրյա ժամանակային (<<լինում է չի լինում >>) և տարածական չափումներից, խզված են բուն իրականության և հեքիաթի <<իրականության>> պատճառահետևանքային կապերը: Հեքիաթը կառուցված է անհավատալիի և անհավանականի հիման վրա, և նրանում տեղի ունեցող իրադարձությունները երբեք չեն կարող տեղի ունենալ մեր իրականության մեջ: Սակայն սա չի նշանակում, որ այն ոչ մի կապ չունի մեր իրականության հետ. այս կապը շաղախված է երևակայականով, դրա համար էլ այն դառնում է ոչ թե անմիաջական, այլ միջնորդավորված:

Թեմայի արդիականությունը_ Հեքիաթի միջոցով գրականության մեջ դրսևորվում է այս կամ այն ժողովրդի ազգային կերպարը, նրա կենսագրությունը, մտածողության ձևը: Հեքիաթների դերը մանուկների դաստիարակության գործում ինչպես միշտ արդիական է:

Աշխատանքի նպատակը_ Բացահայտել հեքիաթների դերը կրտսեր դպրոցականի ստեղծագործական մտածողության ձևավորման գործում:

Աշխատանքի խնդիրները

1. Երեխայի մտածողության, խոսքի և հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի առանձնահատկությունների ուսումնասիրություն:
2. Երեխայի զարգացման գործում հեքիաթի դաստիարակչական նշանակության վերհանում:

Ինքնին հասկանալի է, որ հեքիաթներում արտացոլված են ժողովրդի աշխարհայացքը, մտածողության և հոգեբանության ոչ միայն ուժեղ և առաջավոր կողմերը, այլև պատմականորեն անխուսափելի թույլ և հետամնաց կողմերը: Քանի որ հեքիաթը

իրականությունը երեխային ներկայացնելու անկրկնելի և ինքնատիպ միջոց է: Իրականության երևույթները <<շնչավորված>> , <<ոտք ու ձեռք առած>> երեխային հյուր են գալիս հենց հեքիաթներում (կարծում եմ հեքիաթը որպես այդպիսին միակն է) և երեխան, տարբերելով լավը վատից, կեղծը ճշմարիտից, ընկերասիրությունը դավաճանությունից և …, ինքն է որոշում, թե որ հյուրին պահի, որին հետ ուղարկի՝ ելնելով իր բնույթից ու ատանձնահատկություններից:

Իմ առջև հեքիաթը ներկայանում է հետևյալ կերպ. Գունավոր, մշուշապատ մի խորը գլանաձև անդունդ, որի գույները մեր կյանքի համապատասխանաբար լավ ու վատ օրերն են: Եթե ինչ-որ մեկը փորձի մտնել այդ անդունդը և հաջորդաբար, քայլ առ քայլ անցնի այդ գունավոր շերտերով, ապա անպայման այնտեղ կգտնի իրեն, իր ապրած գոնե մեկ օրը, իր թույլ տված լավ ու վատ արարքները և վերջում, երբ ինչ-որ վերջնական (կարծում եմ լավ, դրական) գաղաձարի, եզրահանգնման գա, անդունդի խորքից կայծակի մի լույս, որն էլ նորից <<իրական աշխարհ>> դուրս գալու դուռը ցույց կտա: Այսինքն՝ երեխաները <<հեքիաթային աշխարհում>> երբեք չեն մոլորվում և իրականությունից չեն կտրվում:

ԳԼՈՒԽ 1

ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Գիտենք, որ հեքիաթներն իրենց ուրույն դերն ու նշանակությունն ունեն երեխայի դաստիարակության գործընթացում: Դաստիարակությունն ավագ սերնդի կողմից մարդկային փորձի՝ ինֆորմացիայի փոխանցումն է մատաղ սերնդին: Իսկ այդ փորձը հենց այնպես չի փոխանցվում, այլ տարբեր ճանապարհներով է մատուցվում՝ այդ թվում և (կարծում եմ) ուսուցանելով: Ըստ այդմ՝ ուսուցման լավագույն և արդյունավետ միջոցներ կարող են համարվել այն հեքիաթները՝ հոգեբանական, դիդակտիկական, հոգեբանատրամաբանական, որոնք թույլ կտան կրթել երեխային՝ այդ գործընթացը դարձնելով ավելի հետաքրքիր և սպասված, ինչպես նաև կօգնեն ճանաչել սեփական ներաշխարհը, բարձր արժեքների վրա պահել իր անձը և <<ես>>-ը:

Կարծում եմ՝ ժամանակն է (այսքան ուշացումից հետո), որ հեքիաթը երեխաներին ներարկի նաև սեր ուսման նկատմամբ, քանի որ այն ուսուցման արդյունավետության ապահովման տեսանկյունից յուրահատուկ տեղ ունի: Հեքիաթը նպաստում է մանկական երևակայության և հետաքրքրասիրության զարգացմանը: Ամենակարևորն այն է, որ հեքիաթն իր ժանրային առանձնահատկությունների շնորհիվ լայն հնարավորություններ է ընձեռնում սովորողների ակտիվության ու ինքնուրույնության զարգացման համար, և որ առաջացնում է սեր ընթերցանության նկատմամբ: Դրա համար էլ ոչ թե պետք է դադարել երեխային հեքիաթ պատմել դպրոց ընդունվելու առաջին օրվանից՝ զրկելով նրան այդ հաճելի րոպեներից, այլ հենց պետք է հեքիաթը ծառայեցնել ուսուցման գործունեությանը: Երեխան, դպրոց մտնելով, ապրում է տարիքային երկրորդ ճգնաժամը՝ շուտ արթնանալ, առանց ծնողների մնալ անծանոթ միջավայրում և այլն, և մեզ՝ ապագա ուսուցիչներիս, մնում է նպաստավոր պայմաններ ստեղծել նչանց այս ամենին ադապտացնելու համար:

Պետք է որոնել և հարթել ուղիներ, որոնք ոչ միայն կնպաստեն ինքնահաստատմանը, ինքնաճանաչմանը և այլ անձնային որակների ձևավորմանը, այլև կնպաստեն գիտելիքների ձեռքբերմանը, այսինքն՝ կհանդիսանան ուսուցման միջոցներ: Քանի դեռ հեքիիաթը, խաղը նրան հետաքրքրում են, կարծում եմ, որ պետք է ընդունել դրանց առաջադրած օգնությունը և դուրս բերել երեխային տարիքային այդ ճգնաժամից:

Մեծահասակին քաջ հայտնի է, որ երեխային դուր է գալիս, երբ հեքիաթներում բույսերն ու կենդանիներն խոսում են, գործում են, բավական է ընդամենը հեքիաթ պատմել երեխային, թե ինչպես նապաստակը չէր կարողանում նոր սովորած տառը գրել, երբ օգնության եկավ գազարը և, ընդունելով այդ տառի տեսքը, ամրացավ նապաստակի տետրում կամ օգնեց նապաստակին միասին գրել, ինչպես ագռավը չէր կարողանում կարդալ, երբ ոսխակը եկավ, ագռավի կոկորդից բռնեց ու դուրս հանեց այդ հնչյունները: Երեխային այս հեքիաթը պատմելուց հետո, երբ մեծահասկն էլ իր օգնությունն առաջարկի, կարծում եմ այդ ճգնաժամը գոնե կմեղմանա առաջիկայում, իսկ հետո քիչ-քիչ կանհետանա: Այսինք՝ երեխային սկզբում պետք է ոգևորել, ինչո՞ւ ոչ, նաև օգնույուն առաջարկել, ինչպես հեքիաթի հերոսներն են միմյանց օգնում: Այդպիսի ոգեշնչման աղբյուր է նաև հեքիաթը:

Ցավալի, բայց փաստ է (ինչը քչերն են ընդունում), որ երեխաների մեծ մասը ատում են <<սովորել>> բառը, քանի որ, երեխաները դեռ նոր դպրոց մտնելով, բայց չհասկանալով այդ բառի իմաստը, արդեն հասցնում են հիասթափվել, հատկապես այն դեպքում, երբ ուսուցումը ստանդարտ ձևով է: Ուսուցիչը ոչ թե քնքուշ, այլ հրամայական տոնով քար լռություն է պահանջում և ասում է, որ <<սովորելու ենք>> նոր ըառ, այնուհետև՝ ավելի ուշ, ավելացնում է, որ տանը կսովորեք …՝ հանձնարարություն է տալիս, և այդպես դասերի ընթացքում շարունակ լսվում է <<սովորել>> բառը, իսկ տանն էլ ծնողները՝ իրենց նախատիքներով, ամբողջ օրը հիշեցնում են, որ <<սովորելու>> բան ունեն: Այս ամենն էլ, իհարկե, նպաստում են ուսման նկատմամբ անհետաքրքրության սաղմերի ի հայտ գալուն:

Բայց բոլորն էլ մոռանում են, որ երեխան խանդում է <<սովորել>>-ուն, որովհետև հենց նրա պատճառով է զրկվել քնից, խաղից, հեքիաթներ կարդալուց և իր համար հաճելի այլ զբաղմունքներից: Դրա համար էլ կարծում եմ, որ ոչ թե պետք է մեկ այլ բառով փոխել <<սովորել>> բառը, այլ պետք է փնտրել նոր մեթոդներ, որոնք կփոխեն նաև այդ բառն անվանող գործողությունը: Իսկ այդպիսի միջոցներ կարող է լինել ինչպես խաղը, այնպես էլ հեքիաթը և այն ամեն հաճելի զբաղմունքներն ինչից երեխան հրաժարվել է դպրոց գնալու և սովորելու համար;

Ինչպես նշեցի հեքիաթը կարող է իր խորը հետքն ու ազդեցությունը թողնել ուսուցման գործունեության վրա:

Հեքիաթն ուսուցողական արժեք ունի ոչ միայն խոսքի զարգացման, այլև աշխարհաճանաչողական տարաբնույթ գիիտելիքների ու տեղեկությունների ձեռքբերման առումով:

Ըստ իս դասը հեքիաթային դարձնելու և երեխայի մտահորիզոնն մեծացնելու համար առավել կարևոր են նաև հեքիաթների բեմադրությունները (անպայման հաշվի առնելով վերաբաշխման ժամանակ երեխաների ցանկություններն ու կարծիքները): Կարծում եմ, որ հերոսները ոչ թե պետք է միայն անգիր վերարտադրեն իրենց բաժին ընկած տողերը, այլև մտնել իրենց դերի մեջ:

Երբ երեխան իր մտքերն արտահայտելու ազատ հնարավորություն է ստանում, դա ոչ միայն օգնում է ուսուցչին, այլ նաև օգնում է երեխայի ինքնաճանաչողությանն ու ինքնահաստատմանը:

Եթե մեզ ինչ-որ մեթոդ է պետք, որից պետք է օգտվենք հեքիաթ հորինելու համար, ապա երեխաներին, կարծում եմ, այդ խնդիրն այդքան էլ չի հուզում, որովհետև նրանց ֆանտազիան այնքան վառ է և այնքան պատկերավոր են ամեն ինչ ընկալում, որ ցանկացած պահի ցանկացած թեմայով կարող են հեքիաթներ հերինել:

Հեքիաթներ հորինելու իր տարբերակն է առաջարկել նաև Ջանի Ռոդարին: Մեթոդներից մեկը հեքիաթի <<աղավաղումն>> է:

Երեխաները բավականին երկար են հեքիաթների նկատմամբ պահպանողական մնում: Ուզում են, որ հեքիաթը նույն բառերով պատմվի, ինչ առաջին անգամ: Նրանց հաճելի է այդ բառերը ճանաչել, դրանց նախնական հաջորդականությամբ յուրացնելը, առաջին անգամվա պես դրանց ապրած հուզումն ապրելը՝ նույն հերթականությամբ: Երեխաներին կարգուկանոն և հանգստություն է պետք: Աշխարհը չպետք է չափից ավելի հաճախ շեղվի հարթված այն ուղղուց, որի վրա երեան այդքան դժվարությամբ է ոտք դրել: Ուստի միանգամայն հնարավոր է, որ սկզբում հեքիաթի <<աղավաղման>> խաղը բորբոքի: Գայլի հայտնվելուն մանուկը նախապատրաստված է, իսկ անծանոթ անձի հայտնվելը տագնապեցնում ՝է: Հայտնի չէ, թե ով է, բարեկա՞մ, թ՞ե թշնամի:

Կարծում եմ՝ յուրաքանչյուր հեքիաթից երեխան ինչ-որ բան է քաղում, կամ հաճախ իրեն նմանեցնում այդ հերոսին (դրական)՝ իրեն է վերագրում նրա դերը՝ կարծելով՝ բոլորը հասկացան, որ հեքիաթը միայն իր մասին է, ինքն է այդ բարի,

ընկերասեր, առատաձեռն, գթասիրտ հերոսը և ուզում է, որ անընդհատ պատմեն << իր մասին >> հքիաթը:

Եթե մենք այդ հեքիաթը անմիջապես երկրորդ անգամ պատմենք այլ տարբերակով (այնինչ երեխան դեռ չի հասցրել մարսել ինչպես հարկն է և գոհանալ իրենով), կարծում եմ կազդի անձնային որակների վրա, <<կթափառի>> սեփական մտքերում և…

Եթե հեքիաթի <<աղավաղման>> մեթոդը նորը ստեղծելու համար է արվում՝

Երեխային գիտակցել տալով, որ Կարմիր գլխարկից բացի կարող են լինել նաև Դեղինը, ապա դա կարող է անել այն ժամանակ, երբ երեխան կձանձրանա և կստիպի նորը պատմել, երբ, ինչպես Ռոդարին է ասել, երեխան կհրաժարվի իր իմացած որևէ հեքիաթից, ինչպես հին խաղալիքից, որը շատ օգտագործելուց հետո անպետքացել է: Այդժամ հենց երեխայի միջոցով կարելի է ցանկացած հեքիաթ <<աղավաղել>> կամ, որ նույնն է, նոր հեքիաթ հորինել: Օրինակ՝ հարցերի միջոցով.

-Լինում է չի լինում, ի՞նչ է լինում: Կամ

- Մի օր թութակը իր տիրոջը խնդրեց. Ի՞նչ խնդրեց, չե՞ք հիշեցնի…

Այդպիսով մենք համարձակորեն ազատություն կտանք երեխաներին, նրանց երևակայությանը և երեխաները, ոչ այնքան հերոսի, ինչքան իրենց հետ կխաղան:

Այդ խաղն առաջատար ազդեցություն կարող է ունենալ նաև մի շարք տաղտկալի գաղափարներից ազատվելու համար. կսովորեցնի գայլից չվախենալ, անտառի ոգուն ոչ այնքան զզվելի ցույց կտա, իսկ կախարդին ծիծաղելի, առավել հստակ կսահմանազատվի հորինված աշխարհն իրականությունից, ուր հայտնի կամայականություններն անթույլատրելի են: Իսկ Ջ. Ռոբարին զգուշացնում է, որ այդ դեպքում չափահասը պետք է պատրաստ լինի մանկական ագրեսիվության առողջ ավելցուկին, ամեն տեսակ անհեթեթություններին:

Հեքիաթների <<աղավաղման>> մյուս տարբերակն էլ, որն առաջարկում է Ջ. Ռոբարին, հեքիաթային թեման մտացածին կամ առավել օրգանապես << շուռ տալն>> է: Օրինակ՝

Կարմիր գլխարկը չար է, իսկ գայլը՝ բարի…

Մոխրոտը՝ անպետք աղջիկը, մեղմ ու բարի կորթ մորը կատաղեցնում է և հեզ ու հլու խորթ քույրերի փեսացուներին խլում…

Հեքիաթը <<շուռ տալու>> մեթոդն օգնում է երևակայելու, նորը ստեղծելու, մտքերին ազատություն տալու, սեփական կարծիքն ու տեսակետն առաջ քաշելու: Այն կօգնի նաև լուծել ևս մեկ շատ կարևոր և այսօր էլ դպրոցներում հաճախ հանդիպող մանկավարժական խնդիր. երեխաներին գիտակցել տալ, որ խորթ մայրը, խորթ քույրորը և այլ հերոսներ կարող են նաև բարի լինել, քանի որ շատ դեպքերում, երբ դասարանում փորձում են բեմադրել հեքիաթը, այդ վատ հերոսների դերերից բոլորը հրաժարվում են, մեկը մյուսին ծաղրում; Դրա համար էլ անհրաժեշտ է, որ երեխաներին երբեք չնմանեցնել այս կամ այն հերոսին, իսկ եթե, այնուամենայնիվ, այդ հերոսի դերը խաղալը ծանր է, ապա թող երեխաներն իրենք վերափոխեն և խոսեն այդ հերոսի անունից ինչպես իրենց հոգեհարազատ է, որի դեպքում կլուծվի ևս մեկ՝ նորը ստեղծելու խնդիրը:

ԳԼՈՒԽ 2

ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Արդի մանկավարժության գերխնդիրներից է ուսուցման ակտիվացման և արդյունավետության բարձրացման նոր եղանակների որոնումը, իսկ դրանց կիրառումը հարկավոր է սկսել ամենավաղ տարիքից:

Հեքիաթը լավագույն միջոց է անձնային որակների ձևավորման և զարգացման համար նաև ուսուցման գործընթացում: Չնայած բոլոր հեքիաթներն իրենց կշռույթն ունեն անձնային որակների ձևավորման հարցում, սակայն առավել հատկանշական են հոգեբանական հեքիաթները, առավել ևս՝ անհատական հոգեբանական հեքիաթները, որոնք կհորինվեն հենց տվյալ անհատի՝ նրա խնդրին լուծում տալու համար:

Երբ աշակերտները հորինում են հեքիաթ և յուրաքանչյուրը կարդում է իր տարբերակը, իսկ մյուսները լսում են, այս գործընթացին իրականում ձևավորվում են բազմաթիվ անձնային որակներ, որոնք նմանատիպ աշխատանքների ընթացքում զարգանում են: Այդպիսի որակներ են լսելու և ուշադիր լինելու կարողությունները՝ ընկերոջ աշխատանքի ներկայացման ժամանակի, երբ աշակերտները չեն միջամտում, երբ չեն ծաղրում ընկերոջը՝ հորինած հեքիաթի համար, երբ փորձում են խորհուրդներ տալ, ուղղել, օգնել այն ներկայացնելու համար, սրանք բոլորն էլ գուցե մեծերիս մանրուքներ են թվում, բայց, կարծում եմ, երեխայի անձնային որակների զարգացումն ընթանում է նման մանրուքների հիման վրա: Հեքիաթը պատմելիս նույնիսկ ամենաամոթխածները դառնում են համարձակ ու վճռական: Նրանք հեքիաթի միջոցով, հեքիաթի հերոսին վերագրելով իրենց վախն ու ամաչկոտությունը՝ փորձում են ինքնահաստատվել: Չնայած, որ նորից խոսում են վախվորած ու ամաչելով, բայց այնպես են ներկայացնում, որ իբր հերոսը կամ հերոսուհին է այդպես ցանկանում խոսել, ներկայանալ:

Հեքիաթի ինքնահաստատման դերի վերաբերյալ Ռոդարին ասել է, որ երեխայի համար հեքիաթն առաջին հերթին մեծահասակին իր կողքին պահելու իդեալական միջոց է: Քանի դեռ հեքիաթը շարունակվում է, մայրիկի կողքին է, մայրն ամբողջովին և երկար ժամանակ երեխայինն է, իսկ մայրիկի թևի տակ զգալը իրեն շատ հաճելի է: Երեխան այդ պահին իրեն շատ հաճելի և վստահ է զգում: Եթե մի հեքիաթը լսելուց հետո երեխան պնդում է նորից պատմել, ամենևին էլ չի նշանակում, որ դա իրոք նրան հետաքրքրում է, կամ որ միայն հեքիաթն է նրան հետաքրքրել. միանգամայն հասկանալի է, որ պարզապես ուզում է երկարաձգել բավականությունը, որպեսզի մայրը կամ քույրը, տատիկը… հնարավորինս երկար մնա մահճակալի մոտ: Եթե հեքիաթը երեխային արդեն

հայտնի է, ապա մնաում է միայն հետևել, որ ճիշտ կարդան կամ պատմեն: Իսկ մինչև այդ նրա գլխավոր զբաղմունքը մորը կամ ուրիշին զննելն է, քանզի նման հնարավորություն բավականին հազվադեպ է լինում:

Երեխան մեծ ուշադրություն է դարձնում պատմողի միմիկաների, ձայնի երանգի վրա, որն էլ ավելի հուզիչ ու տպավորիչ է դարձնում հեքիաթը: Չնայած այն փաստին, որ հեքիաթը առատ տեղեկություններ է հաղորդում նաև լեզվի մասին և նպաստում է բանավոր խոսքի զարգացմանը, շատ քչերն են ուշադրություն դարձնում բայական այդպիսի նրբություններին, ինչպես, օրինակ, լալիս է, ոչ թե՝ լացում… Ամեն դեպքում նրանք հեքիաթից վերցնում են այն, ինչի կարիքը զգում են:

ԳԼՈՒԽ 3

ՀԵՔԻՔԹԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ամենայն ստեղծագործը ժողովուրդն է,

իսկ նրա ամենամեծ ստեղծագործությունը՝ հեքիաթը:

Հովհաննես Թումանյան

Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին և ամենատարածված ստեղծագործություններից են:

Բանահյուսության ձևավորման և որպես հոգևոր սնունդ, որպես <<պարապ վախտի խաղալիք>>, որով լուսացել են խաղաղ գիշերները: Հեքիաթը ժողովրդական բանահյուսության ամենահին ժանրերից է: Իրական փաստը վերարտադրելով երբեմն լեզվով, երբեմն էլ միմիկայով՝ նախամարդը դա մատուցում էր որպես հոգևոր սնունդ: Լեզվի միջոցով և լեզվի զարգացման հետ զուգընթաց երևան է գալիս անհատի ամենակարևոր հատկանիշներից մեկը՝ երազելու ունակությունը, և այդ կարողություններն իրենց դրսևորում են բանահյուսության մեջ՝ առանձնապես հեքիաթի:

Վ. Հարությունյանը, գերագնահատելով հեքիաթի դաստիարակչական նշանակությունը, այն անվանել է << ամենատաղանդավոր մանկավաչժ>>՝ ասելով, որ ամենատաղանդավոր մանկավարժի՝ ժողովրդի հեքիաթը՝ մանկավարժական այդ երախայրիքը, սերունդների անփոխարինելի դասագիրքն է դառնում հազարամյակներ շարունակ: Միայն հետագայում, երբ մարդկությունը ստեղծում է գիրն ու գրականությունը, երբ հասարակությունը շերտավորվում է, ստեղծվում է հասարակության կողմից վերահսկվող դպրոց, բանահյուսության դերը որոշ չափով նվազում է դադարում է դաստիարակչական հիմնական միջոց լինելուց:

Այսպիսով, հնում՝ մինչ դպրոցների հիմնվելը, հեքիաթը եղել է թե՛ բարոյական և թե՛ մտավոր դաստիարակության գլխավոր միջոցը, այսինքն, որ գրեթե նույն է, ինչ ասել ուսուցման արդյունավետ միջոց: Դարեր շարունակ հեքիաթը՝ որպես ուսուցման և դաստիարակության ամենակարևոր միջոց, իր ուրույն և պատվավոր տեղն է զբաղեցրել:

Դասագրերի հայտնվելուն պես հեքիաթների ուսուցողական նշանակությունը մի փոքր խամրել է, որոշ ժամանակ կրթօջախներում համեստորեն լռել է և չի գործել: Սակայն այժմ՝ մեր օրերում, հեքիաթը նորից իր գլուխն է բարձրացրել և փորձում է օգնության հասնել փոքրիկներին՝ իրենց այդ <<բազմաչարչար>>, <<սև ու սպիտակ>> աշխատանքը գունավորելով: Եվ վերջապես, հեքիաթը նույնպես փորձում է բացատրել բոլորին, որ այն տեսական նյութը, որը մատուցվում է, երեխաները չեն մարսի, մինչև որ վերջինս չկերպարանավորվեն, չշնչավորվեն և ավելի <<դյուրամարս>> չդարձնեն:

Հնում հեքիաթը եղել է նույնիսկ գիտելիքների տարածման կարևոր միջոց:

Ժողովրդական հեքիաթը դաստիարակության միջոց է դառնում իր մի շարք առանձնահատկությունների շնորհիվ: Դրանցից մեկը հեքիաթի սյուժեի պարզությունն ու արկածայնությունն է: Հեքիաթը թողարկված նկարագրություններ չի սիրում, նրանում երևում են դրական և բացասական հերոսներ, որոնք իրար դեմ պայքարում են ոչ թե խոսքով, այլ գործով:

Այս հանգամանքն օգնում է երեխաներին իսկույն կողմնորոշվել դեպի իրենց սիրելի հերոսը:

Հեքիաթի համար կարևոր հատկանիշ է նաև բնական ուժերի և կենդանիների անձնավորումը: Երեխաների համար տարօրինակ է, թե ինչու իրենք խոսում են, իսկ կենդանիներն ու բույսերը չեն խոսում և միանգամայն հավանական են համարում նրանց խոսելու կարողությունը: Կենդանիների կյանքն ու հոգեկան աշխարհը շատ պարզ, հասարակ և հասկանալի է: Դրա համար է, որ մանկական հեքիաթները իրենց նյութն առնում են կենդանիների կյանքից: Կենդանիները խոսում, գործում են մարդկանց պես, բայց և պահանջում են իրենց հատուկ կենդանական գծերը:

Հեքիաթի ոճական գլխավոր առանձնահատկությունը, որը հատուկ է միայն հեքիաթին, այն է, որ բավական է երեխաները լսեն <<եղել է չի եղել…>>, <<լինում է չի լինում…>>, <<ժուկով ժամանակով…>> կամ <<կար չկար…>> արտահայտությունները, անմիջապես հասկանում են, որ հեքիաթ է պատմվելու, և որ կախարդական աշխարհի դռներն են բացվելու իրենց առջև:

Հեքիաթները պետք է դասել հոգեբանական սննդի շարքին, որը նա պետք է ընդունի իր զարգացման որոշ շրջանում: Իրականության և հրաշալիքի այդ խառնուրդը

համապատասխանում է մանկական բնական պահանջին, զարգացնում և շատացնում է նրա հասկացողությունների պաշարը, նա (հանք-հանք) խելք է սովորում այդ գունավետ պատկերներից:

Հայ ժողովրդական հեքիաթներն աշխարհի մյուս բոլոր ժողովուրդների հեքիաթների նման իրենց նկարագրությամբ և իրականության արտացոլման եղանակներով միասեռ չեն: Նրանք բաժանվում են հիմնականում երեք տեսակի, որոնցից առաջինը *կենդանական* հեքիաթներն են, երկրորդը՝ *հրաշապատման* հեքիաթները, իսկ երրորդը՝ *իրապատում* կամ *կենցաղային,* երգիծական հեքիաթները:

<u>Կենդանական</u> հեքիաթները գալիս են վաղնջական ժամանակներից և կապված են նրանց ընտելացման առաջին փորձերի հետ: Ապրելով բնության գրկում՝ մարդը շատ հաճախ շփվում էր նաև վայրի կենդանիների հետ և տնտեսական ու այլ նկատառումներով ձգտում հասկանալ նրանց <<լեզուն>>, նրանց <<վարք ու բարքը>>, նրանց <<բնավորությունը>>: Այդ ձգտումը որոշակի հետքեր է թողել որսորդությամբ զբաղվող ցեղերի և ժողովուրդների հեքիաթներում: Կենդանական հեքիաթները ժողովրդի մանկության շրջանի ստեղծագործություններն են, որոնց համար բնորոշ ողջ առարկայականի և հատկապես բնության երևույթների ու կենդանիների անձնավորումը, մարդկայնացումը է: Իրականության ընկալման ու վերարտադրման այս եղնակը սիրով ընդունվում է առաջ մանուկների կողմից, բավարարություն է տալիս ամենից առաջ նրանց պայծառ երևակայությանը ու ձգտումներին, որի պատճառով էլ նրանք կոչվում են նաև *մանկական* հեքիաթներ:

Հայկական մանկական հեքիաթների գործող անձինք, աշխարհի մյուս բոլոր ծողովուրդների մանկական հեքիաթների գործող անձանց նման, կենդանիներն են, գազանները, սողունները, մեղուներն ու թռչունները: Նրանց հիմնական հատկանիշը մարդկային լեզվով խոսելն է, մարդու նման դատելն ու գործելը: Մարդու գործունեության ոչ մի բնագավառ խորթ չէ նրանց: Հանգամանքների բերումով նրանք մերթ զայրանում են, մերթ հանդարտվում, մերթ ատում, մերթ սիրում, մերթ տխրում, մերթ ուրականում: Նրանք վրիժառու են և քինախնդիր, բայց միաժամանակ գիտեն լավություն անել և իրենց անձը զոհելու գնով ծառայել բարի մարդկանց:

Ծագումով ու կազմավորմամբ համեմատաբար հին են և մեր **<u>հրաշապատում</u>** հեքիաթները, որոնք բաժանվում են չորս խմբի՝ ա) հերոսական հեքիաթներ, բ)

ընտանեկան կոնֆլիկտի հիման վրա կառուցված հեքիաթներ, գ) սոցիալդասակարգային կոնֆլիկտի վրա կառուցված հեքիաթներ, դ) արխային հեքիաթներ:

Իրենց քանակով նշանակալի տեղ են զբաղեցնում ընտանեկան կոնֆլիկտի հիման վրա կառուցված հեքիաթները: Նրանց առավել տարածված սյուժեներից հիշատակության արժանի են հետևյալները. դևերը, արաբները դժվար առաջադրանք տալով գյուղացու կամ թագավորի տղային, ցանկանում են ազատվել նրանից և ամուսնանալ նրա մոր հետ: Բայց տղան վերադառնում է և պատժում է նրանց: Մի շարք հեքիաթներում այդ բանն անում են թագավորները՝ տղաների բերած կանանց տիրանալու համար: Խորթ աղջիկը անգթաբար վռնդվում է տնից, բայց նարան օգնում են գերբնական ուժերը և դարձնում թագավորի հարս (<<Արևահատ և օձամանուկ>>): Այս ամենի հետ մեկտեղ հեքիաթասացները հաղթանակը տալիս են հալածված դրական հերոսներին:

Իրապատում հեքիաթները հասարակական կյանքը, մարդկային փոխհարաբերություններն արտացոլում են առավել իրական: Հրաշապատում հեքիաթների հիմքում ընկած ֆանտաստիկ հնարքն այստեղ իսպառ բացակայում է: Իրապատում հեքիաթների հերոսները գերազանցապես անհատականացված են, այս կամ այն դասին ու դասակարգին նրանց պատկանելը ոչ թե մթագնած է, այլ պարզ և որոշակի է: Ռեալիստական հեքիաթները աչքի են ընկնում գործողությունների արագ ու նպատակասլաց զարգացմամբ: Նրանց մեջ մեծ դեր է զբաղեցնում սատիրան, որը խորապես սոցիալական է և սպառիչ: Ռեալիստական հեքիաթների հիմնական թեմաներն են՝ հերոսի ամուսնությունը, ամուսնական հավատարմությունը, ծույլ և անաշխատ տղամարդկանց կերպարի պատկերումը, խելքի և իմաստության, աշխատանքի և արհեստի գովքը, բախտն ու ճակատագիրը, արդարությունն ու անարդարությունը, ճնշողի և ճնշվողի փոխհարաբերությունները և այլն:

Հայ ժողովրդական հեքիաթները մինչև այժմ էլ չեն կորցրել իրենց գեղարվեստական, պատմա-ճանաչողական և դաստիարակչական նշանակությունը: Նրանք իրենց հարուստ բովանդակությամբ ուսումնասիրության լայն ասպարեզ են բացում գիտության բոլոր բնագավառների մասնագետների համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հեքիաթը, հանդիսանալով <<բնավորությունների ծով>>, լինելով մի լեզու, որով հնարավոր է երեխայի հետ խոսել, ինչպես ասել է Ջ. Ռոդարին, <<առանց կոտրատվելու>>, ոչ միայն դաստիարակության միջոց է, այլ նաև թույլ է տալիս բացահայտել անձի ներքին հնարավորությունները և զարգացնել դրանք, ինչպես նաև հանդիսանում է ուսուցման արդյունավետ միջոց:

Հեքիաթը, մասնավորապես հոգեբանական հեքիաթը, դաստիարակության և անձնային որակների ձևավորման ու զարգացման լավագույն միջոց է այնքանով, որ այն <<կարելի է>>-ի, <<չի կարելի>>-ի անփոխարինելի տարբերակներից է: Այսինք, երբ երեխային ասվում է այսինչ բանը կարելի է կամ այսինչ բանը չի կարելի, միշտ հետևում է <<ինչո՞ւ>>-ն, իսկ հեքիաթում երեխայի <<ինչո՞ւ>>-ն նույնպես մեկնաբանվում է. <<ինչո՞ւ>>-ի պատասխանը հերոսի կերպարով կամ հերոսի գործողությամբ մատուցվում է նրանց, կարծում եմ, միայն հեքիաթներում:

Հեքիաթը հնարավորություն է տալիս երեխաներին ինքնուրույն դատողություններ անել, տարբերել լավն ու վատը, սուտն ու կեղծը, բարին ու չարը, և գտնել դրանց պատճառահետևանքային կապերը:

Հեքիաթը՝ այդ կախարդանքներով լի աշխարհը, իր ուրույն դերն ունի նաև ուսուցման մեջ: Այն նպաստում է խոսքի զարգացմանը, ներքին հնարավորությունների բացահայտմանը, քանի որ երեխաներն ունենում են ֆանտազիայի ազատ արձակման հնարավորություն: Այն նպաստում է երևակայական և ստեղծագործական մտածողության զարգացմանը: Հեքիաթը զարգացնում է նաև միջառարկայական կապերը, քանի որ երեխաները չեն բավարարվում միայն հեքիաթ կարդալով և լսելով: Ի վերջո նրանց երևակայությունը <<ծնում է>> անկրկնելի ու ինքնատիպ հեքիաթներ, որոնք անպայման պահանջում են կերպարանավորում, նկարազարդում, որոնց շուրջ կարելի է աշխատել նկարչության, աշխատանքի ուսուցման դասերին՝ օրինակ, ծեփով, խմորով և..., երգեցողության դասերին՝ երաժշտության ներքո, որի ժամանակ, ինչպես ապացուցված է, արդյունքներն ավելի շոշափելի և տարբեր են լինում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մ. Աստվածատուրյան, Ս. Վարդումյան, Ա. Արնաուդյան, Օհանովա, Ռ. Պետրոսյան, Լ. Երեմյան, <<Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում՝>> Ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների համար>> Երևան 2004թ.;
2. Ս. Վարդումյան և ուրիշներ <<Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին>> Երևան 2005թ.;
3. Գ. Գրիգորյան << Հայ ժողովրդի բանահյուսություն >>, Երևան, 1967թ.;
4. Ջ. Ռոդարի <<Ստեղծագործական երևակայության քերականություն>>, Երևան, 1995թ.;
5. Սուխոմլինսկի Վ. Ա.. <<Սիրտս նվիրում եմ երեխաներին>>, Երևան, 1977թ,;
6. Տեր-Գրիգորյան Ա. <<Հեքիաթի դասավանումը տարական դասարաններում>>, Երևան 1968 թ,;